

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարատի՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում անվանական կրթաթոշակներ տրամադրելու մասին հարցը:

Ձեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
Ա.Գրիգորյան:

Ձեկուցողը նշեց. մանդատային հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի, ժամը 15:00-ի նիստում լավել է 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնող թեկնածուների հարցը: Գիտական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» համաձայն՝ ֆակուլտետների դեկանները ներկայացրել են իրենց ֆակուլտետներում անվանական կրթաթոշակների հավակնող թեկնածուների անունները: Մանդատային հանձնաժողովը որոշել է ղեկավարատի հաստատմանը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում համալսարանի 6 ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուներին: Մանդատային հանձնաժողովի որոշումը (նիստի N 2 արձանագրությունը) կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դ.Գալոյանը, Մ.Մովսիսյանը, Գ.Նազարյանը, Վ.Միքայելյանը,
Ն.Կեսոյանը, Մ.Բադալյանը, Ս.Խաչիկյանը, Գ.Մերդինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գիտական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» համաձայն՝ հաստատել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում համալսարանի 6

Ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուների վերաբերյալ մանդատային հանձնաժողովի որոշումը և անվանական կրթաթոշակներ տրամադրել՝

- 1. Անահիտ Արայիկի Սահակյանին՝** կառավարման ֆակուլտետի «Կառավարում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Զ.Բաշինջաղյանի անվան» կրթաթոշակ:
- 2. Անի Միհրանի Եղոյանին՝** ֆինանսական ֆակուլտետի «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Հ.Թումանյանի անվան» կրթաթոշակ:
- 3. Անդրանիկ Ատոմի Մարգարյանին՝** տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Մ.Քոթանյանի անվան» կրթաթոշակ:
- 4. Մելինե Վարդանի Աբրահամյանին՝** մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի «Շուկայաբանություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Վ.Ներկարարյանի անվան» կրթաթոշակ:
- 5. Մարիաննա Վարդանի Դանիելյանին՝** ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «Վիճակագրություն» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Ա.Արզումանյանի անվան» կրթաթոշակ:
- 6. Հայկ Լևոնի Քալանթարյանին՝** հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար**

ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանող: Սահմանել
«Կ.Կարագյանի անվան» կրթաթոշակ:

7. **Իրինա Արթուրի Սարգսյանին՝** տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող կրթաթոշակ:

Ռեկտորի պաշտոնակատար՝

Գիտական քարտուղար՝

2019 թ. հոկտեմբերի 28
Երևան



Դ. Ռ. Գալոյան

Ն. Հ. Դարբինյան